

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԿՆՈՐ ՕՐԻՒ

ՆԱՄԱԿ ԿԱՅ ՌԵԿՐՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԵ Ե ՈՂՂԱՆ ԱՌ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ ԼՍԱՐԱՆ
ԳՈՂՂԱՆ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռագրորեն կա չեն գարծուր,
ԱՐՏՕՒԱՏԵՐ Ժ. ՄԻՆՆԻԷ

ՆՈՐՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՇԱՐՄԹ ՕՐԵՐԸ

ԲԱՏԱՆԱՐԳՈՂՈՒԹԻՒՆ

ԿԻՆՏՈՍ	ԳՐԵ. ՈՂՂ
Գոգիւրի համար	սարեկան 50
» »	վեց ամսեայ 30
Շրջակայից »	սարեկան 60
» »	վեցամսեայ 35
ԱՐՏԱՆԱՐԱՆԻ ՇԱՄԻՐ	
Տարեկան	Ֆրանկ 18
Վեցամսեայ	» 10
ՌՈՒՍՈՅ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՄԻՐ	
Տարեկան	րուբլի 7
Վեցամսեայ	» 4
ԲԱՏԱՆԱՐԳՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՆՈՒԿ Ե	
ԵՒ ՔՂՁԱՏԱՐԻ ՇԱՄԻՐԸ	
Փերիւն վարչութեան վրայ է	

ՉՈՐԵՔՇԱՐՔԻ ԴԵԿՏ. 20/2 ՅԱՆՆ, 1901 ԲՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՂ Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 59

ՎԱՆԿՈՏ ՍՈՒԼԹԱՆԸ

«Մաթէն» ի թղթակիցը, փախտաւկան Օսման փաշայի հետ վերջերս Բարեկի մէջ տեսակցութիւն մը ունեցեր է. այդ միջոցին խօսակցութիւնը Սուլթանի վախկոտութեանը վրայ դարձած ըլլալով, Օսման փաշա ինչ ինչ հետաքրքրական տեղեկութիւններ հաղորդեր է, այդմասին, որոնք Մաթէնի մէջ հրատարակուած ըլլալով, թարգմանաբար այստեղ կ'ամփոփենք:

Յիշեալ թղթակիցը կ'ըսէ:

«Էտուար ֆայլըրոնի կարծեօք, թագաւորներու ամէնքն ալ մեծ պզտիկ յիմար են, որովհետեւ մարդկային բանականութիւնը այնքան մեծ ոյժերու դիմադրելու չափ դարձուր չէ, անպատճառ կը հիւսի:

Կը խոստովանիմ, թէ այդ յիմարներուն կարգին մէջ չի կայ կայսր մը որ այնքան չահագրգռած ըլլայ զիս, որքան կարմիր թագաւորը:

Չեն չահագրգռուր զիս ո՛չ հիւսիսի խարտեաչ կայսրը՝ որ կը հրամայէ անհամար զունդերու և մարդկանց լեզէններու, չըթուներէն մեղրի պէս կը հոսին եղբայրութիւն և մարդկային համերաշխութիւն քարոզող խօսքեր միմիայն:

Ո՛չ ալ հոս, Արևմուտքի երիտասարդ կայսրը՝ ծանօթ իր բազում գոյներով, որ օրը տասներեօթը անգամ համազգեստ կը փոխէ, որ երեսուն և եօթը արուեստի հմուտ է, առանց հաշուելու իրենը, որ միանգամայն կապ ունի Մոհամմատի Գօզլէնի կայսրի հետ: Ո՛չ ալ հարաւի ալեւոր ծերունի կայսրը՝ որ այլ ևս առանց թագաւորութեան մնացած, սակայն զօրքեր ունի իր հրամանին տակ. որքան որ բանտարկեալ է, տէրութիւնները դեպքաններ կը զրկեն իր մօտ, նա որ կըրօնքի և ցեղի ատելութեանց մէջ տեղ բազկատարած գթութիւն կը հայցէ:

Ո՛չ, ասոնց և ոչ մէկը չեն հետաքրքրուր զիս որքան կարմիր Սուլթանը, հոն Արևելքի կողմը, զօրապետներու, ներքինիներու, ժանիսէրներու, լրտեսներու անթիւ բանակներով շըրջապատուած, իր հակառակի պալատին ստուերին մէջ պահուած, մշտնջենական ահ ու զոզով սարսուած, յաճախակի բարկութեան ցնցումներուն

տակ ճմուռած, ճիւղալ արարած մը՝ զոր կարծես հին դարերու բարբարոտութիւնը արդի ժամանակի քաղաքակրթութեան պարգեւած է. ո՛հ, որքան զարհուրահիլ կուտկ:

Ամեն անգամ որ կը պատահիմ թուրքի մը, առաջին հարցումս կը ըլլայ: «Խօսեցեք Սուլթանին վրայօք. ըսէք ինձ թէ ինչպէս մարդ է. խնդրեմ՝ ներկարագրեցէք ինձ այդ մարդուն կարողութեան չափը, զօրութեան սահմանը. նկարագրեցէք իր հպատակներուն վաղաշատութիւնը որոնց կը հրամայէ այդ կարմիր մարդը»:

Միտաք, Մահմուտ, իսմայիլ գէնալ, ասոնց ամենքն ալ միշտ երկդեմի պատասխաններ տուած են ինձ. իրաց վիճակը պզտոր գոյնով պատկերացուցած են իմ առաջ, ինչ բան որ կամբաստանեն այսօր՝ ասոնք շատագուցած են, եթէ ըսեմ, չեմ սխալիր:

Անցեալները առիթէն օգտուելով փութացի մի և նոյն հարցումը ուղղել Օսման փաշային, խնդրեցի իրմէ որ երկու խօսքով բացատրէ ինձ, թէ ինչ է Սուլթանի յիմարութիւնը:

— Արեւմտեան յիմարութիւնէ աւելի, ըսաւ փաշան, ծայրայեղ վախկոտութեան յիմարութիւն մ'է Սուլթանին յիմարութիւնը. խնդրի մը, անմիտի մը պէս կը սպաննէ նա. որպէսզի զինքը չը սպաննեն, ուրիշներուն արհաւիր ազդող տեսարաններ ընդհակառակը Սուլթանին հաճոյք կը պատճառեն, զօր օրինակ պալատին պահապաններէն մէկը դաշոյն մը և կամ դանակ մը թող միտէ մարդու մը փորը, Սուլթանը անանկ շունչ մը կառնէ որ կը զարմանաք. կը վերակենդանանայ և իր գանկին մէջ վխտացող հազարու մէկ կասկածներէն մին փարատած կը ըլլայ, օյս մէրահալանքը կը ըսէ:

Որքան մարդ սպաննուի, կարծես իր ուղեղը, սիրտը այնքան հանգիստ կը ընեն:

Ամեն բանէ վախնալու, կասկածելու խենդութիւնն է որ ընել կուտայ իրեն այս ամեն ինչ: Վախը իրեն համար նողկալի ախտ մ'է՝ որմով վարակուած է. վախը տիւ և զիշեր իր ուղեղը և սիրտը կը տանջէ ու արծառի պէս կը ծակէ իր սիրտին խորը. նայուածք մը, շարժում մը ամենաշնչին բաներ դիւահար կընեն զինք:

Վախէն կամ պիտի մեռնի և կամ պիտի մեռցնէ:

Օր մը տեսայ որ զիւրի մը պէս մեռելազոյն, բազմոցին վրայ ինկած, չգա-

ժան աշուրներով ստոյած, ձայնը չէր ելլեր. պատճառը ինչ ըլլայ կը հասնէք. պալատին զօրքերէն մին՝ իր պատահանին առջեկէն այնպէս վաղելով կերթայ եղբր, որ վախցեր է թէ մի գուցէ իր վրայ յարձակի:

Ուրիշ օր մը ճաշի տանն՝ սեղանին վրայէն յանկարծ կը ցատկէ, սոսկումով մը շուրին սրուակները գետին կը նետէ, ու հազիւ պարտեզ կառնէ շունչը՝ կը բանայ ծղրակները ու առատօրէն ջուրը կը վաղցնէ, մինչև մէկ ժամ զլիտուն վրայ կենալէ վերջը, ափին մէջ կառնէ ու կաթիլ կաթիլ կը սկսի խմել. անպատճառ կասկածած պիտի ըլլար որ մի գուցէ սեղանին ջուրը թունաւորուած ըլլայ. այդ միջոցին ես իր դիմացը պատահեցայ, ու բարեկիցայ. ձեռքս առ ի յարգանս ֆէսիս տանել ու վար դէպի սրունքներս իջեցնելու չի մնաց, միտքագոյն դարձած տեսայ որ կը դողայ Սուլթանը. վախկոտը հապճեպ շարժուածքէս կարծեց որ իրեն բան մը պիտի ընեմ. և այդ օրէն սկսեալ իրարու հետ աղէկ չէինք:

Ուրիշ օր մ'ալ պալատին պահապան զօրքերէն մին՝ Սուլթանին անցած պահուն՝ հազիւ ձեռքը գրպանը կը տանի — շատ կարելի է գրպանէն աղերսագիր մը պիտի հանէր — Սուլթանը ատրճանակը կը բաշէ ու մէկ հարուածով խեղճին ուղեղը կը պայթեցնէ:

Երկու հարիւր ոսկի վճարած էր աւաղակի մը՝ պալատին իտալական նուագաձուներու պետին աղջիկը մէջտեղէն վերցնելու համար, որովհետեւ իր պալատականներէն մին՝ ուրիշէ շատ վախ ունէր Սուլթանը՝ այդ աղջկան սիրտը գրաւած էր:

Տէրութեան եկամտաւոր կէսը լըրտեսներու կը վառնէ. իր խոհանոցին ծախքը միլիոնները կ'անցնին: Գաղղիացի խոհարար մը ունի, որուն խընամբով կերակուրները պատրաստուելէ վերջը խորանայիւր պնակ՝ պողպատեայ սնտուկներու մէջ կը դրուի, ու լաւ մը կը կնքուի որուն բանալին Սուլթանին քով կը մնայ միշտ. մինչև որ անձամբ կնիքը ու շաղրութեամբ չի զննէ, արկղը չի բացուել: Հապա կերակուրները եփած ատեն գիտէք որ ատիճան անաչառ հակողութիւն կը ըլլայ. նախ տասներկու հոգիներ ցերեկ զիշեր կը հակեն. խոհարարին վրայ ասոնց վրայ ալ ուրիշ յանձնարում մը շնորհապէս 15 հոգիներով կը հակէ. ասոնք բաւական չեն, երրորդ բարձրագոյն մարմին մ'ալ կայ որ առջի երկուքին վրայ

կը հակէ և կը լրտեսէ որ մի գուցէ այդ երկուքը մէջերնին գազանի համաձայնին:

Սուլթանին տկարացած ուղեղը՝ ստախկանութեան կողմէն հասած ամենաանհաստատալի լուրերուն հաւատք կընծայէ, և լուրերը բերողները սակիով կը վարձատրէ:

Երեք ամիս չի կայ, լրտես մը Սուլթանին իմաց տուաւ թէ ֆուրդերը կալաթայէն մինչև Երջալըֆէօչկ ծրագրած են ստոյերկրեայ ճամբայ մը փորել, պալատը օդը հանելու համար. Սուլթանը անմիջապէս հաստատով այդ լուրին «Սյու մարդը ինձի մեծ ծառայութիւն մատուց, տասը հազար ֆրանք տուէք անոր, ըսաւ բաց աստի ախողոս և չքանչան չի մնաց շնորհեց: Խեղճ արարած, չի խորհեցաւ անգամ մը որ այդպիսի գործ մը դուրս հանելու համար տարիներու և հազարաւոր գործաւորներու կը կարօտի:

Որչափ ասեմ որ Սուլթանը այդ անդամանելի երկիւղով վարակուած մնայ, դեռ իրմէ շատ ոճիրներ և անգթութիւններ իրպասել անհնար չէ:

Պզտիկ աղջիկ մ'ունէր, վեց տարեկան, իր վրայի աղախիններուն մէկէն ծնած, որու վրայ մասնաւորապէս կը գուրգուրար Սուլթանը. Պզտիկը շատ անգամ իր քով խաղալու կուգար, օր մը Սուլթանը թիկնաթոռին վրայ նստած էր, ատրճանակն ալ ըստ սովորութեան մէկ քովը. պզտիկը եկաւ և հազիւ ատրճանակին մօտը դայցած էր, Սուլթանը սարսափահար:

— Չիս սպաննելու համար եկար, անիծից արմատ, ըսելով պզտիկին երեսն ի վեր պոռաց, ու անմիջապէս գաւազանի հարուածներով սկսաւ այնքան ծեծել որ աղան խուրդնաչ եղաւ. և երբ տեսաւ որ դեռ շունչ կառնէ ու մեռած չէ, հրաման ըրաւ որ աքսորուի Վրաստանի մէկ խորը:

Աղջիկը՝ իր եղբօր Սէլիմ էֆէնտի տիւն հետ այնքան սիրով էր, որ երբ մեկնեցաւ, Սէլիմ էֆէնտի շափազանց տխրեցաւ, ասոր վրայ Սէլիմ էֆէնտին անգամ իր հօր Սուլթանին երեսէն ինկաւ:

Օսման փաշա այս տեղը շունչ անելով, ահա այսպիսի մըրկալից դէպքերու թատրոն մը եղած է ըսաւ, վախկոտ Սուլթանի կեանքը:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Տեղւոյս Որբատիրաց Ընկերութեան Գործադիր Ժողովը հետեւեալ նամակը կը գրէ մեզ ինդրելով անոր հրատարակութիւնը:

Պատուարժան վարչութիւն «Նոր-Օր»ի Աստ

Որբատիրաց Ընկերութեան Գործ. Ժողովը կը յայտարարէ թէ՛ վատի Հալիա յանուն և ի նպաստ ընկերութեանս ձեռնարկուած նուիրատուութեանց գանձումէն՝ (41) քառասուն և մեկ եզրագլան ոսկի ստացած է ձեռամբ ընկերութեանս Մայր Գիւանի Աստնաղպի Տ. Ս. Օտապաշեանէ:

Շնորհակալութիւն չենք յայտնել յարգելու համար մեր համակրելի Աստնաղպիին կամքը, ու կը մաղթենք որ ամեն Հայ անհասօգտութիւնը այնքան եռանդով ցոյց տուած որբատիրական գործունէութենէն:

Նոյնպէս Գործ. Ժողովս կը ծանուցանէ թէ ի մտոյ պիտի հրատարակէ ընկերութեանս հաստատման թուականէն մինչ տարուս վերջ՝ իր ներկայ ու հրատարակ անդամներուն խրատանչարհիւ ըրած վճարմանց քանակը:

Ի գիմաց Գործ. Ժողովոյ Որբատիրաց Ընկերութեան:

Վ. Աստնաղպի Աստնաղպեա Կ. ԵՐՋԿԱՅԵԱՆ Ա. Մ. ՊԵՐՊԵՆՅԱՆ Գահիրէ 23 Գինտ. 1900

Վիեննայէն կը հեռագրեն թէ՛ Մուշե տառաչորդը տեղւոյն կառավարութիւնը բանտարկած էր Գուրը հրամանը երբ արձակուի, բայց հակառակ այդ պաշտօնական հրամանին՝ գեռառաջնորդը բանտարկուած կը մնայ: Մուշի տառաչորդը բանտէն չարձակուելէ զատ, Պիլիպի տառաչորդն ալ ձերբակալուած է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՅ ՅԵ ՍՕՐԿՍԱՆ

ՍԽՍՈՆԻՆ ԿԱՅՐԻԿԸ

(Շար. մտաբեր թիւէն եւ վերջ)

Թանկարժ Ժանը ձեռք մը իր ուսին դրաւ ու խոստ ձայն մը հարցոց իրեն:

— Ինչու համար այդքան արտուժ ես, մանչուկ:

Ետին դարձաւ Սիմոն: Գոռոց մագերով ու մորեքով՝ բարձրահասակ գործաւոր մը բարեկէմ գինը կը գիտէր: Արտասուտաթոր աչքերով և արտայայտ

— Հայ . . . թիւ չ'առ . . . նենա . . . լուս համար . . . զիս . . . ձե . . . ձե . . . ցին, պատասխանեց Սիմոն:

— Ինչպէս հայրիկ չ'ունիս. ամեն մարդ ալ կունենայ, ըսաւ մարդը ժպտելով:

Տղան հագնե կրցաւ ինքզինը գոպկ և — Ես . . . հայրիկ չ'ունիմ . . . ես . . .

Լուրջ կերպարանք մ'առաւ այն աստի գործաւորը. Պանչոյին գտական ըլլալը հասկցած էր. և, թէպէտ ինք նորիկ էր հոն, բայց կէս ու կիսօտար գիտէր անոր պատմութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱԿԵՂՈՆԻՈՅ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆՆԵՐԸ

Դեկտ. 17 թուականու Սալոնիկէն Վիեննայի կրթական կը հեռագրեն թէ՛ Մանաֆըլի կուսակալութեան մէջ Մակեղոնական յեղափոխականները (ասոնց պէսն է Պ. Սարաֆով) չորս մարդ սպաններ են:

Երեքը այլ և այլ (յոյն, սլովակացի և այլն) այդէ կզերականներ են, միւսը՝ վարժապետ մը:

Սուլթանը վերջերս ուղած է գէպի Չինաստան կրօնական պատկաճութիւն մը զրկել մահմետական Չինացիներուն քարոզելու համար որ արդի կայսեր հաւատարիմ մնան: Նախարարաց խորհրդարանը խորհրդակցել է այս բանին վրայ և կարծիք յայտնելով է երկու իւրեաներէ, չորս քաղաքական պաշտօնականէ, և օտմանեան Համալսարանէն ելած երկու չինացի թուրքմաններէ: Սուլթանը հաւանած է այս որոշման:

— Պէտքէն անիւ-Յորը Հըրալտի կը գրեն թէ՛ Թուրքիոյ և Գերմանիոյ միջև գաղտնի համաձայնութիւն մը գոյացել է: Թուրքիա՝ Գերմանիոյ վարձու պիտի ապա Պարսից ծոցին մարդաբարձութիւնը, իրականը ապով որ ծովեզերքները տեղեր հաստատէ այդ որտարանները պաշտպանելու համար: Գերմանիան ալ թուրքիոյ նման փոխանակութիւն մը պիտի ընէ: Կըստի թէ ընդհուպ գերման կզերակուած զօրքեր պիտի երթան յիշեալ ծովեզերքները:

— Պարսիցները տակալի կերպով կ'առնեն Չինաստանի մէջ գտնուող օտարականները: Անոնք 166ին Բէքինէն քաջած հեռագրի մը կ'ընէ թէ Անգլիայուց Գառ-Լի-Տունկ գիւղը առած օրը (15 դեկտ.) վիտապրետ Պարսէր մը մեռնելու պահանջ յիշեալ գիւղը տանող զորաց սայլին: — «Գուր կըրնաք զիս սպաննել, ըսած էր «բայց չէք կրնար Պարսէրներու շարժումը սպաննել, որ մինչև չ'սպաննուին Չինաստանի մէջ գտնուող բոլոր օտար ստտանները՝ չ'սխիտի դադրի:

— Ե՛լ, ինքնինքնիկ եկուր մանչա, ըսաւ նա, և հետեւ եկաւ որ մարդիկը բով ասնիմբն: Հայրիկ մը պիտի . . . տան բեզի-Երկուրը միասին ճամբայ ինկան. մեծը՝ պատիկէն ձեռքէն բռնած էր, ու մարդը նորէն կը ծպտէր. կը հրճուէր — Պանչոյը պիտի տեսնէր. և Պանչոյը ալ, ամեն մարդ գիտէր, գիւղին ամենագեղեցիկ աղջիկներէն մին էր. ու, ինքնինքն, իր մտիքին մէջ կ'ըսէր թեքս թէ՛ սխալուող երիտասարդութիւն մը անպաժ մ'ալ կրնար սխալուիլ:

Ճերմակ, շատ մաքուր անակի մ'առջև հասան:

— Ա՛հ, ըսաւ տղան, ու «Մայրիկ» կանչեց:

Կին մ'երեցաւ, և գործաւորը ալ չ'էր խընդար. հասկցաւ շուտ մը որ կատակի չ'էր գար այդ տարիքոտ սոճոյն աղջիկը, որ խոտակալմ կեցած զրան մէջ, կարծես սեմը կը պաշտպանէր մարդ ներս չ'մտնելու համար այն տունէն, ուր մէկը գինը խարած էր արդէն: Քաշուեղով, գրպիւր ձեռքը

— Ա՛ն՛ք, տիկին, ձեռք պատիկ մտնել որ կրտուած էր գետափը ձեզ կը բերեմ, թոթովեց Սիմոնը տանողը:

Բայց Սիմոն ցատկեց, մօրը վիզը փաթթուեցաւ, ու լարով ըսաւ անոր.

— Չէ, մայրիկ, ուզեցի քնքնիքս շուրջ նեակի, որովհետեւ . . . հայրիկ . . . չ'ունիս

ԴԵՊ Ի ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Չորեքշաբթի օր ժամը 1-ին: Հղարտօրէն հեռակրով նորնորի Առաջնորդին բարի գալուստ մաղթող թափօրին, կանցիները զօշակներով դարգարուած հայկական Սրճարանի առջևէն, ուր խուռն բազմութիւն մը մեր անցքին կ'սպասէր:

Մասքի և Պէն իւ Սուրենի նեղակ ու խոնուած ձամբաները գիտարաւ կարել անցնել վերջ՝ կը հասնինք Առաջնորդարանի դուռը:

Ինչպէս Գահիրէի ուրիշ պողոտաներ՝ հոն ալ անձրիի առթիւ լճացած ցեղեր անանցելի ըրած էր ձանքան ու գետ նոյն աստի միայն մտածուած էր աւազով ցամքեցնել զրան առաջը: Ա՛յ կողմերէս երգեցողութեան ձայնը կը լսենք եկեղեցոյ բակէն, ու գետ մենք հոն ենք, կարքին մէջ, ալ ու ձախ կարգերու ու ցեղի շեղակայուող ոտքով յառաջանալ անկարելի ընելով մեզ:

Վերջապէս յառաջացանք գէպի բակը ուրիշ մասեր եկեղեցի, ի ներկայութեան հոծ բազմութեան մը սովորական արարողութիւնը աւարտել յետոյ, բեմ կ'ու Նորնորի Առաջնորդը՝ իր առաջին բարօք խօսելու համար, զոր ներկայները հեռաբերութեամբ ունկնդրեցին: Երեքսոս ձայն Այլագիան Եպիսկոպոս, այն օր մ'որան նայուածքին ու շեշտութեան մէջ գետ կը տեսնուին խորշոմած, կորովի նշոյններ: Ի սկզբան ձայնը ցած հետեւն բոլորովին անսխիտ արտասանութեամբ մ'որ զգացնել կուտայ բեզ մեքութիւնը, կամաց կամաց այդ ձայնը սխաւ զօրանալ, բառերը աւելի պիւրըմբունցի, շեշտները աւելի կորովայն: Քսան վայրկեանի չափ տեց իր քարոզը, որով բացատրեց այն բնական խոնգոտները որ յախմայն յապագեցոցած էին իր վաղընդիմով գալուստը պարզեց թէ ինչ պիտի ըլլայ իր ընկերը, իր ծրագրած գործունէութիւնը:

« Իր գործը պիտի ըլլայ, ըսաւ, պաշտպանել իր հօտին շահերը, հաշտարար ոգի մ'ունենալ ամեն բանի մէջ, ջանալ հանդիս ըլլալ ամենուն՝ ասոնց սակայն բնահանգրի ծառայելու, միշտ հեռատեսութեամբ, շրջալայնութեամբ, բայց միշտ պէտք ունենալով ժողովուրդին աջակցութեան: Խրատեց

. . . ընելով, ձե . . . ձե . . . ցին . . . զիս . . .

Գիտաստի կնոջ այտերը կաւ կարմիր կըտրեցան, և սեւով մը գրկեց իր տղան մինչ երեսներն ի վար արցունքը աղբիւրի պէս կը հոսէր: Մարդը յուզուած՝ հոն կեցած էր. չ'էր գիտեր թէ ինչպէս թողու ու երթայ: Բայց Սիմոն յանկարծ անոր բով վագեց ու ըսաւ.

Հայրիկ կ'ըլլաս ինձի:

Խոր լուռութիւն մը տրեց: Պանչոյ՝ անձայն ու ամեթակամ՝ ձեռքերը կրծին դրած պատին կըթնած էր: Տղան, տեսնելով որ իրեն չ'են պատասխաներ

— Ե՛թէ չ'էր ուզեր, նորէն պիտի երթամ ինքզինքս շուրջ նետելու, ըսաւ:

Գործաւորը բանը կատակի տարաւ և խընդալով ըսաւ.

— Ա՛յ, ինչու չ'է:

— Անունդ ինչ է ուրեմն, հարցոց այն աստի տղան, արդեւ, երբ որ ուրիշներ անունդ գիտնալ ուզեն, պատասխանեմ:

— Տիկին, պատասխանեց մարդը:

Սիմոն վայրկեան մը լուց այդ անունը գիտուն մէջ լաւ մը տեղադրելու համար. յետոյ, միթիթաբար՝ թեքեր բացաւ և ըսաւ.

— Լաւ. ուրեմն դու իմ հայրս ես Տիկին: Գործաւորը վերցուց զանի գետնէն, համբուրեց անոր երկու այտերը և մեծաբայ փախաւ:

Իր անկնդրները որ՝ օտարութեան մէջ անսխիտ չ'ունուին տահմային բարբերու անխախտ պահպանութեան, հետի մնա մուլութիւններէն, օգտուին ապա կեանքէն զոր կը վայելեն արտասահմանի մէջ: Յիշեցոց թէ ինչ տառապանքներու մէջ այս պահուս Մայր-Հայրենիքը և թէ ինչ են պարտականութիւնները զոր արտասահմանի հայութիւնը ունի հանդէպ իր առաջադր արեւոսնակից եղբայրներուն: Բարեկամութիւններ բրաւ արեւատեսութեանը Բարձր. Խորհիկն, ուրուն հիւրընկալ երկրին մէջ ազատ կապրի հայը. օրհնեց ու փառաբանեց մեր Վլոմ. փաշաները որոնք այնքան օգտակար եղած են իրենց ազգին, աղօթեց ներխաններուն ու բացախաններուն համար:

Աստիք են Սրբազան Առաջնորդին բարոյի շահեկան մտերը, զոր ամփոփելով վեր ի վերոյ ի գիր կ'անուանէր:

Այնուհետև՝ Սրբազանը, շրջապատուած բահանայական և երգեցիկ դասէն, հանդիսաւոր կերպով անաջնորդուեցաւ եկեղեցիէն գէպ ի Առաջնորդարանի հիւրարարը, որ ազգային վարժարանի ուսանողներ՝ աշակերտ և աշակերտուհի, սխաւ ազգային երգերով և՛ ի մանուարի՝ Տիար Յ. Մարգարիտանի կողմէն յօրինուած և Սրբազանին ձօնեալ երգով մը ողջունել Նորին Սրբազանութեան գալուստը: Գաղտնի ու հիշատար էին այդ երգերը, զոր գեղարարար շատ անգամ լըսելու առիթը չունէր մենք ալ: « Տարաքարիէ ի վեր յսած յեւ այդ սպաս երգերը », ըսաւ Սրբազանը յուզուած, ու արտասուրի կ'սթիվներ պահ մը փառլեցան աշխրուն մէջ:

Երբ ընդ մերձ երգեցողութիւնը կը ընդհատուէր բանախօսութիւններով: Ազգային վարժարանի բարձրագոյն դասի աշակերտահիւներէն՝ Օրիորդ Հայկանոյ Տէր Անդրեանեան ճառ մ'արտասանեց՝ զեղեցկահալս, կարծես անհունին հետեւող բանաստեղծի մը գրչէն ծնած: Յաջորդաբար ճառեր արտասանուեցան վարժարանի աշակերտներու կողմանէ, ուրիշ յետոյ Տ. Գ. Սիրունեան՝ յանուն միացեալ սրբերու և ազգատարինամ ընկերութեանց յանձնաժողովոյ և

Միւս օր երբ տղան զպրօցէն ներս մըտաւ ամենքն ալ սխաւ վրան խնդալ: Արձախօրդին երբ որ սրկիւայ տղան դարձեալ ուզեց նոյն բաներն սխալել, բարի պէս այս խօսքը անոր գիտուն զարկաւ

— Տիկին է, հայրիկիս անունը:

— Ո՛ր Տիկին է, Տիկին ինչեան. ինչ անուն և առիկա . . . ո՛րիկ դատար «Տիկին»:

Բան մը չ'պատասխանեց Սիմոն, ու իր հաւատքին մէջ անասան, աչքով ապարկեց կը կարգար անոնց. աւելի՛ կուզէր մեռնել, բան փախիլ անոնց առջևէն: Վարժապետն օգնութեան հասաւ և նա իր մօր բով գնաց:

Երբ ամիս շարունակ, բարձրահասակ գործաւորը՝ Տիկին, Պանչոյին առնին առջևն անցաւ, ու, երբեմն, երբ աստիկ որ նա պատահանը նստած կը կարէ, կը համարձակէր հետը խօսելու: Պանչոյը միշտ բաղաբալար էր ու լուրջ. չ'էր ինչպար անոր հետ ու չ'էր թողար որ ներս մտնէ: Տիկին, սակայն, ամեն մարդու պէս թիչ մը ինքնահաճ, իրեն այնպէս կը թուէր թէ իրեն հետ խօսած ժամանակ՝ Պանչոյը՝ սովորականէն աւելի կը կարմրէր:

Բայց անգամ մը որ մէկու մը անունը կ'ուտրի զայն շինելը շատ դժուար է. ու հակառակ Պանչոյին իր իգործ գրած մեծ զգուշութեան, գիւղին մէջ կը բամբասուրէ արդէն:

Տ. Ս. Օտարաշահան՝ ի դիմաց Որբասիրաց Բնկերութեան, սեղաններ կարգացին Որբազանին բարի գարտեանը ստի՛ն:

Գիր. Որբասիրաց շնորհալուծութիւն յայտնեց Որբասիրաց ընկերութեան կողմէ արտայայտուած ամէն անկէ՛զ՝ զգացումներուն համար, ու ըսաւ թէ՛ ինք իր կողմէ ամէն բան ընկող պատրաստ է, միայն թէ՛ և ոչ մէկ բան պիտի կրնայ ընել առանց ժողովուրդին միահամուտ ակնկցութեան:

Ու ներկաները մեկնեցան անուշիկ տրպարութիւններու տակ:

ՆԱՄԱԿ ՍՈՒՏԱՆԷՆ

Օմտուրման, 13 Դեկտ.

1882էն սկսեալ մինչև 1896՝ առան ու չորս տարիներ անդադար մտնուանդ Մահտիի մը բարբաւրոտ շահատակութիւնը փակած էր Սուտանի երբեմնի ոռկեկուտ դռները քաղաքակիրթ աշխարհին առաջ:

Հետեանքը, չարագէտ ամէն մասամբ, այն էր՝ որ վաճառականութիւնը կեդրոնացած էր Եգիպտոսի մէջ, Եգիպտական կառավարութեան սահմանազուլուր մնալով վատի Հալֆա, Ասուանէն չորս օր հեռաւորութեամբ կարեոր բայց չոր ու ցամաք բանակեղծի մը, ուրկէ խարթում հասնելու համար՝ երկու ամսուան ուղւոով, 6-ձապայտ և անասնելի ճանքորդութիւն պէտք էր արշաւանքէն առաջ, իսկ այսօր, շնորհիւ քաղաքակիրթութեան զոր հոն մտցուց արշաւանքը, մէկ, երկու կամ աւելի օր, չողկառքը իրարու հետ հազորդակցութեան կը դնէ Սուտանը Եգիպտոսի հետ:

Ինչպէս ըսի, վաճառականութիւնը այն ատեն, Սուտանի հետ, բուրբովին մեռեալ վիճակի մէջ էր: Յոյնները, սակայն, շարունակեցին վատի-Հալֆա

մնալ, բաւականալով քիչովը զոր կը յուսային սեննալ տեղւոյն բանակի հետ առևտրական շահերէն, որ թէպէտ հեղհեղեղ կը պահէին, զօրքը տակուտ իր կեդրոնավայրը փոխադրուած ու Կուտանի վերաբնակչութիւն ալ սպազայի խնդիր մնալով:

Իրենց ցեղին յատկանշական տուկունութեամբը՝ յոյն վաճառականները բնաւ չվճարեցին շահու սովէն, տարեկանով դարանակալ սպասեցին հոն, քաղցած գայլերու նման. կեանքերին ու ունեցածին շատ անգամ վտանգած էին, վստահ ըլլալով միայն որ օրին մէկը պիտի դար ցանկալի օրը, շահաւէտ, երանաւէտ:

Մտեցած էր այդ օրը:

1896ին՝ դիւանագիտութեան անվարանքելի փոխաներէն ներս, Սուտանական արշաւանքի ծրագրերը կը պատրաստուի. ամբողջ, որուն քով սև աշխարհը խորհրդաւոր երկիր մը դարձած էր, կ'սխափի, հիւսարանչաչեքով հանդիսատես կը լայլ Անկլո-Եգիպտական արշաւանքին յանկարծակիս ու մեծադուրդ մեկնումին: Ու խեղճ, ծմապահ բայց ճարպիկ ու հիմա երջանիկ յոյնը հոն էր, վատի Հալֆայի անշուք գետափին վրայ, «բարի գալուստի» պատկանելի պատրաստականութեամբ, ի յարգանս յառաջապահ երկնատաք գնդին, որուն հաւատարիմ ուղեկիցը պիտի ըլլար ուր որ երթար:

Այսպէս՝ կտրուութիւնը, որ միշտ պէտք էր ունենար իր արժանավայել վարձատրութիւնը, հասաւ այն կէտնապատակին, փառքին՝ որուն համար կեանքը իսկ վտանգած էր:

Շահեցաւ յոյնը, առատածեռնօրէն ծախսեց, ու՝ իր քաղութեամբ՝ շահեցուց Ելլատան: Օրինակ կուզէք, ազնիւ ընթերցողներ, Երբ թրքահայկենական պատերազմը ծագեցաւ,

Սուտանի յոյները ուղիներ լծափեցին իրենց հայրենիքի յաղթանակին խաբուելի յոյսով. այնքան ծայրայից հեռաքրքրողներ գարձած էին պատերազմի օրը որին յարերով, որ ալ հեռագրական պաշտօնաները կտուղեցնելու չափ՝ Բիւթէրի երկայն հեռագրալուրերով չգոհացած, ամէն օր մտանաւոր հեռագիրներ կը սեղալին Գահիրէէն, ասոնց հասցէին: Ու այս ամէնը գրամով կը ըլլայ:

Հայրենասիրութիւն, հարստութիւն և կամ մեծ մեծ շահեր երբ իրարու կը միանան, տառապող հայրենիքը շուտ կառողջանայ, կը վերականգնի, կը փրկուի, եթէ միայն պառակտումի յեղիցողի ողին չուշանայ աւերիւտ ամէն բան:

Իսկ հայերս, որ յոյնէն աւելի իրաւունք ունէինք օգտուելու բարեպատե՛հ առթէն, խոր քնով մը կը քնանայինք:

«Սուտան կրակի դժոխք մ'է, պատերազմ ալ կայ եղեր. մենք ինչ գործ ունինք հոն, մեր առևտուրի պայմանական սխաթէմը, այսինքն մայրաքաղաքի մը մէջ լծացած դորձառնութիւնը, կը բաւէ մեզի ալ մեր թոռանց թոռներուն ալ:»

Hum! Երբ տարիներ առաջ, մեր երկրին մէջ, ծոյլ թուրքին ու արմար գիւղացիին հետ քարծ կընէինք ու կը շահէինք, կայր լուստտեութեամբ մը մենք ալ կարճեցինք թէ աշխարհի էն գործն ու բանիբուն ազգն է Հայը, հաշտագէտ, տնտեսագէտ՝ բայց վտիկոտ . . .

Արշաւանքի սկիզբները մէկ ժամաչ գործ հայ միայն կար վատի-Հալֆա, ու շահերուն էն արդիւնաւոր օրերը սակաւ կանցնէին Հայուն համար, երբ ձայն մը լսուեցաւ Նիւպիոյ հեռաւոր անապատներէն, գիւթող, խրատուական, լուստես ու յոռեսն մի-

անգամայն: «Փարոսի» պատահական մէկ թղթակիցը, «Սուտանցին», առաջինը ըլլալով՝ «ուր էք, հայրենակիցներ», կը ձայնէր եղիպտոսեանկ Հայուն, նոյն թերթին միջոցաւ:

Ու այն ատեն մենք ալ արթնցանք, շատ ուշ էր, հասկցանք թէ՛ Սուտան մեզի անծանօթ մնալու չէր, քանի որ մենք առաջ՝ Հայեր ուղտով չչափած էին անոր երկայն ճամբան:

Չեմ առաջարկեր շահագրգռող ընթերցողին որ Սուտան գայ. ասի գործի մարդիկներու գիտնալիք բանն է և թէ՛ հոս ալ ինչպէս ուրիշ ամէն տեղեր, գրամն է նախ և առաջ որ գործէ զաշխարհ: Որք'ան ցաւալի բանն, սակայն, տեսնել որ՝ այս պիտի կարեւոր գաղթավայրի մը մէջ, տարիներ անցնելէ յետոյ, հայ գաղթականութիւնը (մեծ մասամբ արաբկերցի) կը բաղկանայ միմիայն քսան հոգիէ, Օմտուրմանի և խարթումի մէջ, վաճառական են, արհեստաւորներ և կամ աննշան գրամագլխով խանութպաններ: Շահերը այն ատեն աւելի կը ըլլան, երբ նոր նոր արշաւանքներ տեղի կունենան:

Օ՛հ զրկուած ենք ձերմակ աշխարհի պչրալից հաճոյքներէն. երկիցս պանդուխտ՝ հեռի ենք Մայր-Հայրենիքէն, բայց հայրենիքը իր աւերակներով, ազգը՝ իր վէրքերով և որբերը՝ իրենց թշուառ կացութեամբ կենդանի պատկերներ են Սուտանցի Հայերու աչերուն առաջ: Չենք մտցած ու չպիտի մտնանք զիրենք. սպառնալից զոր ստուած ենք, արդէն ինքնին գովելի, պէտք է իր նախանձախնդիր հետեւողները ունենայ ամէն տեղ, ուր որ զղայուն հայ սիրտ մը կը բարսխէ:

Ասիկէ ութ ամիս առաջ, արդէն, Օմտուրմանի Հայ գաղութը 22 սակոյ

Իսկ Սիմոն շատ կը սիրեր իր նոր հայրիկը ու ամեն օր, երբ իրկուտ ըլլար, կ'երթար անոր հետ պտտելու: Գարոցէն ետ չէր մնար երբէք. ու ընկերներուն մէջէն կ'անցնէր յոխորտանքով, առանց անոնց պատասխանելու:

Օր մը, սակայն, ամենէն առաջ իրեն վրայ յարձակող մանչուկը

— Սուտ խօսեցար. հայրիկիդ անունը Ֆիլիբ չէ, ըսաւ իրեն:

— Ինչէն գիտես, հարցուց Սիմոն յուզեալ:

— Ստամբուլը ձեռքերը շփելով ակնցուց:

— Որովհետեւ եթէ հայրիկ մ'ունենայիր, մայրիկիդ էրկը պիտի ըլլար անիկա:

Սիմոն գագաց այդ գատուութեան ճըշմարտութեան առջեւ. սակայն և այնպէս

— Ինչ որ ալ ըլլայ իմ հայրիկս է ան, պատասխանեց:

— Կրնայ ըլլալ, ըսաւ դիմացինը՝ քիչին տակէն խնդրով. բայց բու հայրիկի չէ որ որովին:

Պանշօգին տղեկը գլուխը ծածց ու մըտախոտով Ֆիլիբին աշխատած դարբնոցին կողմը գնաց:

Այդ դարբնոցը ծոռերու մէջ թաղուած էր կարճեւ: Շատ մալթ էր հոն: Ահեղ հնոցին կարմիր, բոցալուտ լոյսը միայն՝ մուրճներով՝ իրենց սալերուն վրայ աշխատող

հինգ բաղկամերկ դարբններու վեճը կը լուսաւորէր: Ասոնք ոտքի վրայ կեցած՝ դեւերու պէս՝ աչքերին բոցալուտ, իրենց չարչրկած հրաշիկ երկաթին վրայ կը յանկէն՝ և իրենց մտածութիւնը ելեկէնք կ'առնէին իրենց մտքներուն նման:

Սիմոն առանց տեսնուելու ներս մտաւ, ու գոցող կամացուկ մը՝ իր բարեկամին թեւէն քաշեց: Ֆիլիբ ետին դարձաւ: Աշխատութիւնն ընդհատուեցաւ յանկարծ, և բոլորն ալ ուշադիրօրէն սիրան նայլի:

Այն ատեն, այս անտուր լուծեան մէջէն լսուեցաւ Սիմոնի տկար ձայնը.

— Իրա՛ւ է, Ֆիլիբ, Միշտին տղան քիչ մ'առաջ ըսաւ թէ՛ դու իմին հայրիկս չես եղեր բոլորովին:

— Ինչո՞ւ համար, հարցուց բանուորը: Տղան իր ամբողջ միամտութեամբ

— Որովհետեւ դու իմին մայրիկիս էրկը չես, պատասխանեց:

Մարդ չննդաց: Ֆիլիբ՝ ճակատը ձեռքին ետևի կողմին վրայ յենած՝ որով սայլին վրայ տնկուած մուրճին կո՛թը բանած էր, կանգնած մնաց: Կը խորհէր: Չորս ընկերները զինք կը դիտէին և Սիմոն՝ որ այս հոկաններուն միջև շատ պզտիկ կ'երևար կ'ապառք անհամբեր: Գարբիներէն մին յանկարծ, իր ընկերներուն մտածածը ամփոփելով՝ Ֆիլիբին ըսաւ.

— Ինչ որ ալ ըլլայ՝ բարի, քաջ, արթուն, և կարգապահ աղջիկ մըն է Պրանշօգ, ու պարկեշտ մարդու մ'արձանաւոր կին մը կրնայ ըլլալ:

— Այո՛, ճշմարիտ է ասիկա, ըսին միմեքերը:

— Յանցանքը ի՞նչ է, եթէ այդ աղջիկը անգամ մը սխալեցաւ, շարունակեց զործաւորը: Ամուսնանալ խոստացած կին իրեն հետ. և ես ատանկ շատ աղջիկներ կը ճանչնամ այսօր, որ միևնոյն բանն ըրած են ու դարձեալ կը յարգուին:

— Այո՛, իրա՛ւ է ասիկա, պատասխանեցին միմեքերը:

— Ինչո՞ւ կ'ընչ՝ միմիկնակ՝ գաւալը մեծցնելու համար քաշածը, շարունակեց Ֆիլիբ, եկեղեցիէն զատ ուրիշ տեղ չերթալով՝ տունը փակուած ու թափած արցունքը Աստուած միայն գիտէ:

— Այո՛ ալ իրաւ է, ըսին երեք ընկերները:

Այն ատեն հնոցին կրակն արժարձող փրօցին ձայնը միայն կը լսուէր: Ֆիլիբ՝ Սիմոնին կողմէ հակեցաւ յանկարծ, ու

— Գնա՛, մայրիկիդ ըսէ որ այս իրիկուն հետք պիտի տեսնուիմ:

Ապա՝ ուսերէս հրելով գուրս հանեց ազան:

Ֆիլիբ վերսկսաւ իր աշխատութիւնը, ու մէկ անգամէն հինգ մուրճը միտին ինկան

սայլին վրայ: Մուրճի պէս դորաւոր, հուսկու, և խնդումներն մինչև գիշեր ծծեցին անոնք երկաթը: Բայց ինչպէս որ սունի գիշեր մը մայր եկեղեցուց զանգակը միաններէն աւելի ուժգին կը զօղանջէ, այնպէս ալ Ֆիլիբին մուրճին շատաք կը սիրեր միտնելուն, ու հեղհեղեղ աւելի խոցուցիչ փոքրով մը կը ծծէր երկաթը: Եւ ինք, հրովառ աչօք, կայծերուն մէջ կեցած մուրճագար կը դարձնէր:

Երկինքը աստիւրով դարգարուած էր, երբ եկաւ Պրանշօգին գուրս գարնելու: Կիրակի օրուան զգեստները, մաքուր շապիկ մը հագած և թարմօրէն ամբուած էր: Գեոտափ կինը երկցաւ սեմին վրայ ու ըսաւ վշտալէ՛մ

— Լաւ չ'է մտնիմ գալը, պարսն Ֆիլիբ:

Սա թօթովեց, պատասխանել ուղեց, բայց չփոխած անոր առջև կանգնած մնաց:

— Կը հասկնար անուշա՛ւ, շարունակեց նէ, թէ՛ չեմ ուշեր որ ալ վրաս խօսին:

— Ինչ կ'ըլլայ, եթէ ի՛նչ կինս ըլլալ ուզէր:

Չայն չեղաւ. բայց Ֆիլիբ սենեակին ստուերին մէջ գետնին իննոյ մարմնոյ մը աղմուկը իմացաւ: Դուտ մը ներս մտաւ, և Սիմոն որ պատկած էր իր անդոզին մէջ, ականջին դպաւ համբոյրի մը և իր սօր ձայնը որ շատ կամաց կը խօսէր: Յե-

գումար մը զրկեց Գահիրէ, տեղւոյն չորս որբախնամ ընկերութիւններուն մէջ բաժնուերու համար:

Անկէ վերջը եկաւ վատի-Հալֆաի որբախրական ձեռնարկը սրուն զըժ-բազդաբար չկարողացանք մասնակցել մենք, այն յուսախաբակաւ մտածու-մով թէ՛ մեր ծանօթ հայրենակիցը խարթումի ալ այցելութիւն մը տալու զիւրութիւնը պիտի ունենար. չունեցանք այդ բարեբաղդութիւնը, և մենք՝ ըստ մեր կարեաց՝ պիտի ջանանք շահագործել այդ արտասովոր ձեռնարկէն առաջ եկած ուրախաւիթ համա-կրանքը:

Մօտ է՝ նոր տարին: Այժմէն «չը-նորհաւոր ամանոր» ազնիւ ընթերցողին: Հրճուեցէք, խեղճ որբուկներ, օրհնեցէք ձեր Սուտանցի եղբայրները, որոնք ձեզի կաղնիքէ մը ընծայելու ազնիւ մտածումով՝ նուիրատուութեան ցանկ մը բացած են հիմա իրենց և կամաւոր օտարներուն մէջ:

Քսանեհինգ ոսկւոյ գումար մը հա-ւարուած է արգէն. այդ գումարը կուզուի . . . հասցնել 50 ոսկիի անկաս-կած, ամէն պարագայի մէջ: Նուիրա-տուններու անունները մտաւորապէս պիտի զրկուին «Նոր-Օր»ի, զոր հա-ճոյքով կը կարդանք:

Ի՛հ, սիրելի ընթերցողներ, եթէ կը կարծէք որ իսկապէս գովելի բան մ'է մեր ըրածը՝ յիշեցէք ուրեմն ձեր հե-ռաբնակ պանդուխտ եղբայրները. ե-կեղեցականներ թող աղօթեն մեր գոր-ծին յաջողութեանը համար իսկ զուր, ո՛վ փորձիկ որբեր, ձեր մանկական մատղաշ բաղակները վեր առած՝ զթու-թիւն հայցիցէք անգութ Աստուծ-մէն . . .

Օրհնեցէք ձեր բարերարներ: Ապ-րի՛ն ձեր բարերարները:

ԱՐՄԷՆ

այո, Սիմոն ինքզինք իր բարեկամին ձեռաց մէջ գտաւ. այս վերջինը զինք բա-զուկներուն վրայ բռնած

— Ըսէ՛, անոնց, ըս ընկերներուդ որ հայրիկդ Ֆիլիբ Ռեմի գարբինն է. որ ի-րենց ականջը պիտի քաշէ, եթէ քեզի չա-րիք հասցնեն, ըսաւ անոր:

Միւս օրը, երբ աշակերտները բուրբը ներկայ էին ու դասերը պիտի սկսուէր, փոքրիկն Սիմոն ստգի կանգնեցաւ, բոլորու-վին տեղոյն և շրթները զոզոզուան, ըսաւ յստակ ձայնով մը.

— Հայրիկս գարբին Ֆիլիբ Ռեմին է, որ ասկէ վերջ ինձի չարիք ընողներսն բոլորին ալ ականջը պիտի քաշէ:

Այս անգամ մարդ չենդաց: Ֆիլիբ Ռեմին շատ լաւ կը ճանչնային. անիկայ հայր մըն էր, որ պատիւ կը բերէր ո՛ր և է զակի մը:

Թարգմ. ՎԱՀԷ

Ա. Զ. Դ.

Շատերու կողմէ յայտնուած փա- փաքի մը զոհացում տալու և մեր ընթերցողներու զիւրութիւն մը ըն- ծայելու նպատակով, այսուհետեւ մեր թերթը հատով պիտի ծախուի Շա- րա Ապտ-էլ-Ապիզի սկիզբը Պ. ԿԱՐՍ- ՊԵՏ ԵՐԶՆԿԱՑԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Գլոթ-Պէյ փողոցի ծայրը և թը- րամվէյնիւրու կայարանին մօտ ձխա- վաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍԱՊԵԱՆԻ քով:

Ա. Զ. Դ.

Կը ծախուի Տ. Կ. Երզնկացեանի խա- նութը ի Շարա Ապտ-իլ-Ապիզ:

ՕՐԱՑՈՅՑ ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ 1901 ՏԱՐԻՈՅ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՓՐԿՉԻ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ ԳԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ ԳԱՏՊԵՐԱԶԱՐԻ

Երջակայ գիւղերէն եկած յանձնա- րարութիւնը փութով կը կատարուին Դիմել վերոյիշեալ հասցէին:

Le Gérant J. MUNIER

Տպաւ. «Միւրքիւն».— Թ. Ս. Փափագեանի

ՊԱՆԳ ԼԻՕՆԷՉ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՐԵՍԱԿԱ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաժանօթ գրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալնալ, Տ. ՄԻՐՔԻԶ ՍՕՍՅԵԱՆ, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամե- նուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, Ա Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի բաղա- քապետութենէն պաշտօնապէս վա- ւերացուած փոխանորդարի համա- ձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէյի միջոցաւ ամեն տեսակ գրամատիւն և Քուէի Ֆոնսիէի, Վիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ: Սմա- կան չնչին գումարի մը խնայողու- թեամբ ձեռք կը բերուի քիչ առնէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակա- հանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին զիմել Նիւ- տոսի վրայ փաստաբան Ռաբիթարիի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըր- կել հետեալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՄԱՐՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՄՍՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ ար ըս Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գատիկանը:

Կը բժշկէ բերնի և սկուայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Ազքատ- ները ձրի կը դարմանէ ամեն օր, ա- ռաւօտեան ժամը 8էն 9:

ՊԵԼԱԵԱՆ-ԹԻՃԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ

ԱՐԱՆՑ ԵՒ ՏԵԿՆԱՆՑ

ԵՒ ԶԵՒԱԴԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապսիճի մեծ պողոտային վրայ Տայիտի Սանիյէի դիմացը, Ըսխիկն ելեկտրակոն գործիներու վաճառատներ:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարա- րենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ զիմոյ Պատ. յաճախողները, գործի մար- րութեան, զիններու չափաւորութեան և ճշգրտահասութեան կողմէն:

Մեր գործատուերոյն մէջ կ'աւան- դուին նաև ձեռագիրութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարե- լագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատուերին:

ՔԱՇԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱԶՆՆՃԵԱՆ

Շարա Ապտ-Սապան

Նիւտ-Տիւրքիւնի դեղատոնից դիմացը:

Օգտաւն ու վտարճալի դիւր. մա- քուր ու վայելուչ սպտոս համեղ ու անդարար կերակուրներու զանազա- նութիւնն, անխարդախ պատրաստու- թիւն. ճոխ ճաշացուցակ մը դիւրա- մատչելի գիներով. ահա՛ Գազանձ- եան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ողէ, փորձի համար մէկ անգամ թող զիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախողը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

Տ Պ Ա Ր Ա Ն



Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱՅԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ տ լարանին մէջ կը տպուին հայերէն ու երոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա- րակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, չըջարեղաններ, այցեւորման, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակազուրուներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամօք եւ ճաշակատու տպագրութեամբ:

ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ